ԹԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

ՀԱՍԱ ԴԱ թղթակից-անդամ Դ. Խ. ՍԱՐԴԱՅԱՆ

Թադևոս Ավդալբեգյանը կարող էր այժմ մեզ ժամանակակից լինել, քանի որ նշում ենք նրա ծննդյան 90-ամյակը։ Այդպիսի օրինակներ մենք գիտենք։ Սակայն նա ոչ միայն ժամանակակից չէ այժմ, այլ նրա գործունեության դադարից անցել է արդեն չորս տասնամյակ, որոնք ընդգրկում են Հայաստանի հասարակական գիտությունների զարգացման մի քանի փուլեր։

Թե՛ Թ. Ավդալբեգյանի գործերի հրատարակումը մեր օրերում, թե՛ մեր հասարակայնության կողմից նրա կատարածի բարձր արժեքավորումը այն փաստերն են, որոնք հավաստում են, որ նրա գործերը մնայուն են և այսօր էլ ծառայում են մեր գիտությանը ու դեռ կծառայեն։

Ըսկական հետազոտողի նկարագիրը անկրկնելի է։ Ամեն մի գիտության աշխատողից անբաժանելի հատկություններից բացի այն պարունակում է նաև ուրույն գծեր, որոնց միավորումը հենց տարբերում-առանձնացնում է տվյալ հետազոտողին, իր կնիքը դնում հետազոտության համար նրա ընտրած առարկայի, այդ առարկայի հետազոտման ուղիների և, վերջապես, ստացված արդյունքների վրա։ Եթե փորձենք այս տեսակետից տալ Թ. Ավդալբեգյանի բնութագիրը, ապա դրսևորվում են մի քանի առանձնահատկություններ։

Դրանցից առաջինն այն է, որ Թ. Ավդալբեգյանը մեկ դեմքում միավորել է պատմաբանի, տնտեսագետի և բանասերի։ Այն չափով օրգանական է միավորել, որ հաճախ անհնարին է որոշել, թե տվյալ նրա գործը որ գիտության խնդիրներն է արծարծում՝ պատմության, տնտեսության, թե՞ բանասիրության։ Կարելի է դատել միայն տվյալ գործում այս կամ այն խնդիրների կամ ուսումնասիրական մեթոդների գերակշռության մասին։

Թ. Ավդալբեգյանի, որպես հետազոտողի, երկրորդ առանձնահատկությունը այն է եղել, որ նա միշտ ձգտել է իր հետազոտական ջանքերի առարկա դարձնել առավել դժվարին, առեղծվածային բնույթ կրող խնդիրներ, այնպիսիք, որոնց լուծումը մեծ մասամբ կապված է որևէ նոր, անսպասելի մոտեցման, որևէ հատուկ բանալու հայտնագործման, որևէ գաղտնիքի, ծածկագրի բացահայտման հետ։ Բնական է, որ հետազոտական նման առարկաներ ընտրելու հնարավորությունը Թ. Ավդալբեգյանի մոտ պայմանավորված է եղել առաջին հերթին այդօրինակ խնդիրների լուծման նրա կարողությամբ։

Եվ այստեղ կարելի է խոսել նաև մի երրորդ հատկանիշի մասին, այն է՝ Թ. Ավդալբեգյանի կուռ, երկաթյա գիտական տրամաբանության։ Տրամաբանությունն ընդհանրապես վերցրած յուրաքանչյուր գիտնականի դինանոցում իր պատշաճ տեղը պիտի ունենա, բայց տվյալ դեպքում դա այնքան է շեշտված ու գործուն, որ մենք չենք վարանում այդպիսի ուժեղ տրամաբանությունը համարել Թ. Ավդալբեգյան-հետազոտողի հատկանշական գիծ։

Կարելի է ավելացնել նաև մի չորրորդ հատկանիշ. դա պատմա-բանասիրա-տնտեսագիտական հարցերի լայն ժամանակագրական ընդգրկման պա-

յագան է։ Թ. Ավդալբեգյանի շոշափած խնդիրները սկսվում են ուրարտական շրջանով և հասնում մեր օրերին։ Ըստ որում, բաց չի թողնված ոչ մի շրջան՝ հին Հայաստան, վաղ միջնադար, զարգացած և ուշ միջնադար, նոր պատմություն։

Հին շրջանին նվիրված աշխատություններից ամենածավալունն ու բովանդակալիցը «Միհրը Հայոց մեջ» մենագրությունն է։ Աշխատության սկզբում հեղինակը ճշտում է Միհր-Միթրա դիցանվան տարբերակները հայ իրականության մեջ, և սրանց թիվն ու տարածվածությունը հիմք են տալիս նրան ժխտելու այն ընդունված կարծիքը, թե Միհրի պաշտամունքը առանձնապես մեծ դեր չի խաղացել հին Հայաստանում, համեմատած պանթեոնի այլ աստվածների պաշտամունքի հետ։ Հաջորդ ենթաբաժնում հեղինակը ցույց է տալիս նաև Միհր աստծու պաշտամունքի բազմաթիվ կենտրոնների առկայությունը հին Հայաստանում։ Իր նյութերը նա, բնականաբար, քաղում է V դարի և հաջորդ դարերի գրավոր աղբյուրներից, որոնց մեջ գտնում է ոչ միայն նախաքրիստոնեական շրջանի միհրապաշտության արտացոլումը, այլև հենարան այն մտքի, որ քրիստոնեության հաստատումից հետո էլ Միհրի դերը հայ հասարակության գաղափարախոսության մեջ շատ էական է եղել, թեև հետզհետե փոխել է իր որակը։ Այս դրույթի հետագա զարգացումն ենք տեսնում հաջորդ բաժիններում, որոնք վերնագրված են «Միհրի հավատալիքը» և «Միհրի դիվացումը»։ Այստեղ շրջանառության մեջ են դրվում Միհրի պաշտամունքին հարող՝ Արտավազդի առասպելը և հայկական էպոսի՝ Մհերին վերաբերող հատվածները, որոնք ինքնին դրսևորում են Միհրի պաշտամունքի հարատևման փաստը և կրած ձևափոխությունները։

Աշխատությունն ավարտվում է հայկական Նեռն—«Անտիքրիստոս» հասկացության՝ Միհրի կերպարից բխեցնելու և «Նեռն» անունն իսկ՝ Միհր անվամբ ստուգաբանելու սրամիտ փորձով։

Գնահատելով «Միհրը Հայոց մեջ» մենագրության նշանակությունը հայ պատմագրության, հատկապես հին Հայաստանի հոգևոր մշակույթի ուսումնասիրության տակավին խիստ թերամշակ բնագավառում, պետք է շեշտել, որ գրված ու հրատարակված լինելով 20-ական թթ., այն այսօր էլ պահպանում է իր անկյունաքարային բնույթը։ Բավական է նշել, որ աշխատությունը մեկն է այն ընդամենը երկու առկա մենագրություններից, որոնք նվիրված են հայ հեթանոսական պանթեոնի առանձին աստվածությունների պաշտամունքին (մյուսն է Գր. Ղափանցյանի «Արա Գեղեցիկի պաշտամունքը»)։

Բայց սույն աշխատությունը Թ. Ավդալբեգյանի առավել ծավալուն երկն է, ապա որպես նրա համար ամենից ավելի բնորոշ երկ՝ վերը հիշատակված նրա ստեղծագործական անհատականության տեսակետից, ես կանվանեի «Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձ հինգերորդ դարում» աշխատությունը։ Սկսենք նրանից, որ ուրիշ խառնվածքի տեր հետազոտողի մտքովն անգամ չէր անցնի իր առջև նման մի խնդիր դնել, որովհետև այն արտաքնապես միանգամյան անիրագործելի է թվում անհրաժեշտ թվական տվյալների բացակայության պատճառով։ Սակայն գործի են անցնում հմուտ վերծանողը և պատմաբան-տնտեսագետ-բանասերը։ Եվ այս լրացված Ավդալբեգյանի հատուկ տրամաբանությամբ։ Խնդրին մերձենալու ելակետն այն է, որ տվյալ պատմական իրողությունը չի կարող իսպառ կորչել, չքանալ, կյանքում ամեն ինչ փոխկապակցված է, և եթե անմիջական նյութ չի պահպանվել նրա որևէ կողմի

մասին, ապա անշուշտ նյութ կգտնվի կյանքի այդ կողմի՝ նրա այլ կողմերում թողած հետքերի վերաբերյալ։ Այս ելակետից մեկնելով, Ավդալբեգյանը V դարում աշխատավարձերի մասին նյութ հայթայթելու համար դիմում է «Կանոնագիրք Հայոցում» այլևայլ հանցանքների ու զանցանքների համար սահմանված պատիժների և տուգանքների չափի մասին պահպանված տեղեկություններին և ստանում այնտեղից անուրանալի տվյալներ՝ իրագործելու իր հետազոտությունը։ Թե ինչպիսի հնարամտությամբ ու վարպետորեն է նա այդ կատարում, մենք այստեղ չենք նկարագրի, խորհուրդ տալով այսօրվա մեր ընթերցողներին ևս մեկ անգամ, կամ եթե առաջին անգամ, ապա կրկնակի հաճույքով ծանոթանալ այդ աշխատությանը։ Կնշենք միայն, որ հանցանքների ու զանցանքների համար սահմանված տուգանքին վերաբերող փաստերի հիման վրա նրան հաջողվում է պարզել. ա) V դարում շինականի և գեղջկուհու ստացած միջին աշխատավարձը՝ տարեվարձը, ամսեվարձը, շաբաթավարձը և օրավարձը, բ) աշխատավարձի մաքսիմալ և մինիմալ դրույքները, գ) դրանց արտահայտությունը արդի դրամական արժեքներով, դ) դրանց փոխհարաբերությունը հին Արևելքում, հին Հունաստանում, միջնադարյան և ուշ միջնադարյան Եվրոպայում, Ռուսաստանում, Վրաստանում և Հայաստանում տեղ գտած աշխատավարձային նորմերի հետ, ուստի և որոշել նրանց թե՛ համեմատական, թե՛ բացարձակ արժեքները։



Նույնանման միջոցներով և հմտությամբ է կատարված մի այլ աշխատություն՝ «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ», որտեղ ուսումնասիրված են վիմագրական տվյալներ այս կամ այն եկեղեցում ու վանքում տարբեր հավատացյալների կողմից պատվիրված և իրագործված պատարագների արժեքների մասին, և այս տվյալների մանրակնին և համակողմանի հետազոտության հիմքի վրա գտնված է միջնադարյան Հայաստանում շարժական և անշարժ գույքի տարբեր տեսակների գների որոշման բանալին։

«Սիմեոն կաթողիկոսի «Հիշատակարանի» ծածկագիրը» աշխատությունը նվիրված է դրամական այլևայլ հաշվարկների հետ կապված թվական տվյալների գաղտնագրման համար կիրառված ծածկագրի վերծանմանը։ Սույն վերծանմամբ Սիմեոն կաթողիկոսի այդ «Հիշատակարանը», որը Հայաստանի տնտեսության պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է, նորանոր հետազոտական հնարավորություններ է ընձեռում տնտեսագետ-պատմաբաններին։

Թվարկված պատմա-տնտեսագիտական աշխատությունները հիրավի հատուկ, ուրույն տեղ են գրավում հայագիտության մեջ։ Հայաստանի տնտեսական պատմության ուսումնասիրությունը առ այսօր ընթացել է հիմնականում բուն սկզբնաղբյուրներին անմիջապես չանդրադարձող ուղիներով։ Նրան որպես սկզբնաղբյուր են ծառայել ավելի շուտ պատմաբանների համապատասխան աշխատությունները։ Ավդալբեգյանի այս էտյուդները երջանիկ բացառություն են կազմում, տալով տնտեսության պատմության այն նյութական հիմքը, առանց որի նա մնում է վերացական և անհամոզիչ։ Ցավոք, այդ ուղղությունը հայ տնտեսագիտության մեջ սկսվել ու առայժմ նաև ավարտվել է իրենով՝ Թ. Ավդալբեգյանով, չի ունեցել իր շարունակողն ու զարգացնողը։

Տնտեսագետի և պատմաբանի մտքի համագործակցությունն մի այլ տիպի արտահայտություն է «Արաքսի հնադարյան հունը Արարատյան դաշտում» աշխատությունը։ Այդ համագործակցության նպատակների հստակ բնութագրումը գտնում ենք հոդվածի ներածական մասում. բերում ենք այն ամբողջությամբ (նաև որպես Ավդալբեգյանի ընտիր գիտական լեզվի նմուշ)։

«Մեր երկրի ոռոգման ցանցի երակներից մեկի՝ Արաքսի, հին ու հնադարյան հունների ուսումնասիրությունը, որ վերաբերում է Հայաստանի ոռոգման պատմությանը, ունի ոչ միայն գիտական-տեսական նշանակություն, այլև շատ գործնական-օգտախնդրական արժողություն։ Այս հունների կյանքի անցյալ իրողություններին ծանոթանալը շահագրգռական է ոչ միայն երկրաբանի, աշխարհագրագետի ու երկրագետի (краевед) համար, այլև հողի ու ջրի շինարարությանը նվիրված մասնագետների համար։ Մտածելով, որ վերջիններս կարող են պիտանի գիտելիքներ քաղել ներկա ու գալիք այն ծրագրերի համար, որոնց առաջադրած խնդիրն է կամ լինելու է՝

1. Մեծ առուներ հանել Արաքսից,
2. Օգտագործել Արաքսի մաքսիմում-դեբիտը,
3. Օգտագործել դեպի Արաքս սլացող հեղեղատների ջրերը,
4. Ջրշեղջեր (водоем) կառուցել երկրորդ, երրորդ կետերի և այլ ջրերի համար,
5. Օգտագործել Արաքս թափվող գետակների ավելորդ ջրերը,
6. Սրանց ստորին հոսանքի հողերն ուրիշ ջրերով ոռոգելու պայմանով տնտեսել նրանց միջին ու վերին հոսանքի ջրային ֆոնդն առապարների ոռոգումը հաստատապես ապահովելու դիտավորությամբ և, վերջապես,
7. Ջորացնել մեր դաշտավայրի ճահիճները,—

մենք պատշաճ օրգանի առջև բարձրացրել ենք հատուկ գիտական էքսպեդիցիայի միջոցով Արաքսի հունները հետախուզելու հարցը։ Այս էքսպեդիցիայի գործի գիտական նախապատրաստությանը նպաստելու դիտումով է ահա, որ հրատարակում ենք այս ակնարկը, որ թվում է, թե պատմական բանասիրական-տեղագրական նոր դիտողություններ է պարունակում Արաքսի հունների ու սրանց հարակից նյութերի մասին»։

Ահա այս խոսքերը վառ կերպով ցույց են տալիս, որ Թ. Ավդալբեգյանի մեջ միավորված էին նաև լավագույն իմաստով «կաբինետային», ակադեմիական դիտնականը և իր հայրենիքի առօրյայով ազնվորեն մտահոգված հասարակական գործիչն ու պրակտիկ աշխատողը։

Նախորդի նման պատմա-աշխարհագրական, այլև շեշտված բանասիրական բնույթ է կրում «Զվարթնոցի շուրջը» փայլուն աշխատությունը։ Այն շո-

շափում է հայ ճարտարապետության պատմության խնդիրները։ Հեղինակն ուսումնասիրում է միջնադարյան ամենափառավոր ճարտարապետական կոթողներից մեկի՝ Զվարթնոցի ստեղծման պատմությունը և նրան կից բնակավայրի շենացման հանգամանքները։ Նոր լուսաբանումներ են տրվում մի շարք հարցերի, ինչպես, օրինակ, տաճարի տեղի ընտրության, նրա կառուցման պատճառների, «Զվարթնոցի» անվանման իմաստի, նրան կից քաղաքատիպ բնակավայրի բնակչության իրավիճակի, Զվարթնոցը կերտած վարպետների հարցերին։ Ի եզրափակումն հեղինակը համոզիչ և նրբին փաստարկներով բացահայտում է Զվարթնոցի հիմնադիր ու իր գործունեության այլևայլ կողմերով քաջ հայտնի Ներսես Շինող կաթողիկոսի կերպարի մի նոր երանգ պարզում է, որ սա հանդես է եկել Զվարթնոցի ոչ միայն սոսկ որպես հիմնադիր, այլև որպես նրա ճարտարապետ։

Թադևոս Ավդալբեգյանի գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ են գրավում Մովսես Խորենացու առեղծվածին, այսինքն՝ հայ պատմա-բանասիրության «առեղծվածների առեղծվածին», նվիրված երկու աշխատությունները, որոնք, ցավոք, պահպանվել ու հրատարակված են ոչ թե լրիվ տեքստով, այլ միայն մանրամասն կոնսպեկտների ձևով։ Ինչպես և սպասելի էր մեր հեղինակից, նա ձեռք է զարկել սույն առեղծվածի երկու առավել կնճռոտ ու դժվարիմաց կետերին՝ այն է. բազում հետազոտողների զբաղեցրած ու նրանց վեճերի առարկա դարձած՝ Խորենացու ապրած ժամանակի խնդրին, ինչպես և այդչափ մեծ ուշադրության չարժանացած, բայց դարձյալ հույժ բարդ ու ծանր՝ Խորենացու ժամանակագրական պատկերացումների խնդրին։

Վերջինս արծարծվել է «Խորենացու «Պատմության» ժամանակագրական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ» խորագրով 1929 թ. կարդացած դեկուցման մեջ։ Այստեղ փորձ է արվել Խորենացու «Հայոց պատմության» մեջ հասած բնագրի մի շարք տեղերի սրբագրման եղանակով լուծել Խորենացու ժամանակագրության առկա պատկերի և մեր գիտցած գիտական ժամանակագրության մեջ եղած որոշ հակասությունները։ Կոնսպեկտը պարունակում է բազմաթիվ սուր և նուրբ դիտողություններ, որոնք կարևոր նպաստ են այդ դժվարին խնդիրը, ինչպես և Խորենացու հետ կապված այլ խնդիրներ լուծելու գործում։

Խորենացուն նվիրված մյուս աշխատությունը վերնագրված է՝ «Խորենացու «Պատմության» լեզուն հունաբան դպրոցի շրջանների կապակցությամբ» և ներկայացնում է Հակոբ Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքի «Խորենացու բառապաշարը» վերնագրված բաժնի քննադատությունը։ Այն զեկուցվել է 1934 թ. և մեծ տպավորություն գործել։

Այստեղ Թ. Ավդալբեգյանը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել Խորենացուն V դարից տեղաշարժելու տեսակետն ամրապնդելու համար Հ. Մանանդյանի առաջ քաշած նկատառումներից մեկը՝ թե «Հայոց պատմության» լեզվի կրողը չէր կարող V դարում ապրած լինել, քանի որ այդ լեզուն պարունակում է բազմաթիվ հունաբան և «հետին» բառեր, այնպիսիները, որոնք թույլ չեն տալիս նրա կրողին IX դարից ավելի վաղ ապրած համարել։

Իհարկե, սա Խորենացուն տեղաշարժելու զորեղ հիմք կլիներ, եթե նկատառումն իրոք արդարանար։ Սակայն այն չի արդարանում։ Ավդալբեգյանը մի առ մի ստուգել է Հ. Մանանդյանի բերած բառերի ամբողջ զանգվածը և մի առ մի հիմնավորված կերպով հերքել նրանց՝ վերոհիշյալ նկատառման

հիմք ծառայելու հնարավորությունը։ Նա ցույց է տվել, որ այդ բառերի ճնշող մեծամասնությունը, բացառյալ 10 բառի, հանդիպում են IX դարից շատ առաջ, հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրության մեջ, և ոչ մի կերպ չեն կարող հիմք ծառայել Խորենացու տեղաշարժմանը։ Մնացած 10 բառը թեև չեն հիշատակված IX դարից առաջ, սակայն դրանք կարող են հենց Խորենացու ստեղծածը լինել։ Պետք է հատկապես նշել, որ այս աշխատության մեջ Թ. Ավդալբեգյանը, բացի ընդհանուր բանասիրական հմտությունից, ցուցադրել է լեզվագիտության հատուկ ճյուղը կազմող բառարանային գործի մեջ իր մասնագիտական պատրաստությունը։ Մենք գիտենք, որ նա նաև բառարանների հեղինակ է։

Հայկական վաղ միջնադարին են վերաբերում նաև «Բանասերի օրագրից» գողտրիկ հոդվածաշարի օղակները, որոնցից յուրաքանչյուրը մի առեղծվածի լուծում է։ Հոդվածներից մեկը նվիրված է Կոգովիտ գավառի «Եղբարք» լեռան անվան ճշտմանը, անուն, որի աղճատումը Փավստոս Բուզանդի «Պատմության» մեջ հասած տեքստում հետազոտողներին սխալ մեկնաբանությունների է հանգեցրել։ Մյուս հոդվածը քննում է Կորյունին Մեսրոպ Մաշտոցի վրացի աշակերտների թվին դասելու խնդիրը։ Թ. Ավդալբեգյանը մերժում է այդ դրույթը։ Մի երրորդը նվիրված է հայ հեթանոսական պանթեոնի ավագ աստված Արամազդի՝ Խորենացու մոտ հանդիպող «Կունդ» մականվան մեկնաբանմանը։ Կողմն Սեպհական գնդին՝ դա նույն Վասպուրական նահանգն է, ցույց է տալիս Թ. Ավդալբեգյանը հաջորդ հոդվածում։ Ի եզրափակումն հոդվածաշարի հեղինակը անդրադառնում է Երևան քաղաքի հիշատակման խնդրին միջնադարյան հայ պատմագրության մեջ։ Նա ցույց է տալիս, որ Սեբեոսի համապատասխան տեղում Երևան տեղանվան ընթերցումից պետք է հրաժարվել։

Վերջին հոդվածով Թ. Ավդալբեգյանը իրեն հատուկ լայնախոհությամբ ամրապնդում է այն ուսանելի թեզը, թե գիտության համար պակաս կարևոր բան չէ արմատացած կամ արմատանալ սկսող սխալ, թեև գայթակղիչ տեսակետից ապատվելը, քան մի նոր ու ճիշտ տեսակետի առաջ քաշելը։ Որ մեր հեղինակը այդ թեզի հետևողական պաշտպանն էր, ցույց է տալիս նաև նրա «Կարծեցյալ Շապուհը» հոդվածը։ Այստեղ խոսքը այն հանրահայտ ձեռագրի մասին է, որը հրատարակիչների կողմից վերագրվել էր IX—X դդ. պատմիչ Շապուհ Բագրատունու գրչին և որի մասին տեղեկություն կա, թե նա հեղինակել է մեզ չհասած Բագրատունյաց պատմությունը։ Հրապարակված ձեռագրի վերլուծությունը Թ. Ավդալբեգյանին հանգեցնում է այն եզրակացության, որ դրա հեղինակը Շապուհ Բագրատունին լինել չէր կարող։

Հեղինակի մյուս հայագիտական աշխատությունները տեղափոխում են մեզ ուշ միջնադար կամ նոր պատմության նախադուռը։

«Անհայտ աղանդավորներ հայոց մեջ ԺԶ և ԺԷ դարերում» աշխատության մեջ Թ. Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ աղբյուրները երկար լռությունից հետո նորից հիշատակում են աղանդավորության մասին։ Նոր աղանդավորներից մեկի ուսմունքը բավական մոտ է եղել թոնդրակեցիների դաղափարներին, բայց ավելի արմատական բնույթ է կրել։

Մեծարժեք աշխատությունների մի ամբողջ շարք արծարծում է XVIII դարի վերջերի հայ իրականությանը վերաբերող խնդիրներ։ Այստեղ, հայ ազատագրական մտքի կարթոնքի դարաշրջանում, Ավդալբեգյանին հետաքրքրում

են նրա դրսևորումները ժողովրդի տարբեր խավերում ու տարբեր հատվածներում, բուն Հայաստանում ու գաղութահայության ոլորտներում և այս ամենը՝ համաշխարհային պատմության մայրուղիներում տեղի ունեցող իրադարձությունների հետնախորքի վրա։

Ահա, Վաղարշապատի կողմերը գործած Տեր-Մղրախ անունով մեկը ստանում է Ավդալբեգյանից «Առաջին գաղափարական ավազակը հայոց մեջ» որակումը, որովհետև մտադրվել էր ոչ ավելի և ոչ պակաս, քան իր զույգ ձեռքերով խորտակել աշխարհի սոցիալական չարը՝ կողոպտելով հարուստներին և ավարը բաժանելով աղքատներին։

Եվ այս պարզունակ պատկերը ժամանակով համընկնում է ֆրանսիական հեղափոխության տարիներին։ Ավդալբեգյանը ավարտում է իր հոդվածը հետևյալ բառերով՝ «Այնտեղ Միրաբո, Դանտոն, Ռոբեսպիեր, Մարա՞տ։ Այստեղ, մեզանում... Մերկե-Կուլաբի միայնակ Տեր-Մղրախ...»։

Թվում է թե վիհը անհաղթահարելի է։ Բայց այդպես չէ իրականում։ Ավդալբեգյան-պատմաբանի աշխարհայեցողության կարևոր գծերից մեկը հենց այն է, որ նրա համար հայ ժողովրդի պատմությունը գոյություն ունի և հետազոտելի է միայն համաշխարհային պատմության միջավայրում։ Եվ ահա նա իր հաջորդ գործերում քայլ առ քայլ հետևում է, թե ինչպես «երրորդ դասի» գաղափարախոսությունը արծարծվում է նաև հայ իրականության մեջ, բուն դնում նախ և առաջ դրան լավ նախապատրաստված հնդկահայ գաղութում, հանդես բերում ազատագրական մտքի հոսանք, ծնում հանրապետական գաղափարներով տոգորված գործիչների ու սրանց ձեռքով ստեղծում բուն Հայաստանը հանրապետական կերպարանքով վերակերտելու ու անկախ դարձնելու համարձակ ծրագրեր։

Այսպես, «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում» հոդվածում ուսումնասիրված է հայկական պետության ստեղծման, նրա քաղաքական ստատուտի և նրա՝ Ռուսաստանի հետ փոխհարաբերության կերտման երկու տարբեր ծրագիր։ Հեղինակը ցույց է տալիս, որ դրանք արտահայտում են երկու տարբեր հոսանքների մտայնություն։ Առաջինը՝ աջը, ռուսահայ կալվածատիրության, հոգևորականության և առավել հարուստ վաճառականների, երկրորդը՝ ձախը, հնդկահայոց ղեկավարների, որոնք արտահայտում էին «երրորդ դասի» շահագրգռությունները։

«Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և ժամանակակից հայերը» աշխատության մեջ, ըստ պատմական սուղ տվյալների ընձեռած հնարավորության, դիտարկվում է հայ իրականության տարբեր խմբավորումների և անհատների՝ ֆրանսիական մեծ հեղափոխության նկատմամբ ունեցած վերաբերմունքի խնդիրը։

«Հայ անդրանիկ պարբերականն ու նրա խմբագիրը» հոդվածում առաջին անգամ հայ պատմագրության մեջ տրվում է հնդկահայոց գաղութի ղեկավարների օրգան հանդիսացած՝ «Ազդարար» անդրանիկ հայ պարբերականի գաղափարական ուղղվածության ու շահագրգռությունների վերլուծված գիտական բնութագիրը։ Ուրվագծվում է նաև նրա խմբագիր Հարություն Եմավոնյանի ճակատագիրը։

«Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը XVIII դարում» աշխատության մեջ մանրամասն հետազոտության է ենթարկում Մադրասում հրատարակված մի գործ՝ «Նշավակը», որը պարու-

նակում է արմատական հանրապետական գաղափարներ, այն է՝ պահանջում է ստեղծել սահմանադրություն, անջատել եկեղեցին պետությունից, հաստատել համընդհանուր ընտրական իրավունք, վերացնել ճորտատիրություն։ Թ. Ավդալբեգյանը ցույց է տալիս, որ «Նշավակի» հեղինակն է եղել ոչ այլ որ, քան հնդկահայոց մադրասյան խմբի ղեկավար և գաղափարախոս Շահամիր Շահամիրյանը։

Հարկավ, վերջին տասնամյակների ընթացքում սովետահայ պատմաբանները նորանոր նյութեր, պատկերացումներ ու թեզեր են ավելացրել այդ բնագավառում արված՝ Թ. Ավդալբեգյանի ներդրումի վրա և այսուհանդերձ Ավդալբեգյանի այդ գրվածքների այսօրվա ընթերցողին ևս չի լքում սրանց թարմության զգացումը, որովհետև դրանք այսօր սովորական դարձած մրտքերից շատերի ակունքն են հանդիսանում։

Հայտնի է նաև Թ. Ավդալբեգյանի՝ պատմական Հայաստանում տեղ գտած հարկային սիստեմների մասին արժեքավոր ուսումնասիրությունների շարքը, որը մեծ ներդրում է Հայաստանի տնտեսության պատմության մշակման մեջ։ Բայց մենք կբավարարվենք այստեղ միայն դրանց թվարկմամբ։ Առանձնապես կարևոր է «Հաս, սակ և բաժ» ծավալուն աշխատությունը, որի շավիղներով են տարված նաև «Բահրան և մյուլքը XVII և XVIII դարերում», «Գլխահարկը Թուրքիայում XVII—XVIII դարերում հայ պատմագրության տվյալներով» և «Աբ-ի-Քուրան ջրանցքը Պարսկաստանում ու համանուն արքայական հարկը» հետազոտությունները։

Ամփոփելով մեր հոդվածը Թադևոս Ավդալբեգյանի հայագիտական աշխատությունների մասին, կցանկանայինք շեշտել, որ ականավոր գիտնականը լիուլի բռնել է ժամանակի քննությունը։ Նրա ժառանգությունը ակտուալ է, գործող նաև այսօր, քանի որ Թադևոս Ավդալբեգյանի հայագիտական հետազոտությունների մի շարք արդյունքներ տակավին մնում են գիտության վերջին խոսք։

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ТАДЕОСА АВДАЛБЕГЯНА

(К 90-летию со дня рождения)

Член-корр. АН АрмССР Г. Х. САРКИСЯН

(Резюме)

В статье дана характеристика арменоведческих трудов крупного советского армянского историка, экономиста и филолога Тадеоса Авдалбегяна (1886—1937). Отличительные черты научного творчества Т. Авдалбегяна — широкий хронологический и тематический охват арменоведческой проблематики, стремление к решению наиболее сложных историко-филологических вопросов, железная логика исследования. Арменоведческие труды Т. Авдалбегяна сохраняют свое научное значение по сей день.